Կանանց միջազգային օրվա, մայրության և գեղեցկության տոների կապակցությամբ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների և պլաստիկ քարտերի գծով ակցիայի պայմանները

1. **Ակցիայի անվանումը**՝ «Երազանքների ամիս»
   Ակցիայի ժամանակահատվածում պլաստիկ քարտեր ձեռք բերած Հաճախորդների և ժամկետային ավանդ ներդրած Հաճախորդների ցանկությունները կիրականացվեն ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ կողմից:
2. **Ակցիայի ժամկետը**՝ 2019թ. մարտի 8-ից - ապրիլի 7-ը ներառյալ
3. **Ակցիայի մասնակիցներ**՝ ակցիայի ընթացքում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) պլաստիկ քարտեր ձեռք բերած և/կամ ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական անձ հաճախորդները (այսուհետ՝ Հաճախորդ(ներ)):
4. **Ակցիայի անցկացման ընթացակարգը**՝

4.1 Ակցիայի ընթացքում յուրաքանչյուր մասնակից հնարավորություն կունենա լրացնել «Երազանքների թերթիկ», որտեղ կնշի գեղեցիկ սեռի ներկայացուցչի համար ցանկություն,

4.2 Լրացված «Երազանքների թերթիկը» պետք է գցել Բանկում տեղադրված «Երազանքների արկղի» մեջ կամ հանձնել Հաճախորդների սպասարկման և դրամարկղային գործառնությունների (ՀՍԴԳ) բաժնի պետին,

4.3 Ցանկությունը պետք է լինի չափելի՝ չգերազանցելով 100,000 ՀՀ դրամը, և իրատեսական:

4.4 Ակցիայի ընթացակարգային անխափանության և արդյունավետ կազմակերպման նպատակով գործելու է Բանկի շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից կազմված հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

4.5 Ակցիայի ամփոփմամբ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ ստեղծված Հանձնաժողովի կողմից կընտրվեն 15 յուրահատուկ ցանկություն, որոնց կատարումն ապահովվելու է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից,

4.6 Ակցիայի պայմանները չեն գործում նվեր քարտ ստացած և արտոնյալ պայմաններով քարտեր ստացած Հաճախորդների համար, ինչպես նաև Բանկի աշխատակիցների և նրանց հետ փոխկապակցված անձանց համար,

4.7 Ակցիայի շրջանակներում նվերներ չեն ստանա այն Հաճախորդները, որոնց ավանդային կամ քարտային պայմանագրի գործողության ժամկետը դադարեցված կլինի ակցիայի ամփոփման պահին:

5. **Լրացուցիչ պայմաններ.**

5.1 Ակցիայի ամփոփմամբ յուրաքանչյուր մասնակցի համար կարող է իրականացվել 1 (մեկ) «Երազանքների թերթիկում» նշված ցանկություն:

5.2 «Երազանքների թերթիկների» գույքագրումը, նույնականացումը կատարվելու է ակցիայի ժամկետի ավարտից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ընտրված ցանկությունների հայտարարումը՝ ակցիայի ժամկետի ավարտից հետո 2 (երկու) ամսվա ընթացքում, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գլխամասային գրասենյակում:

5.3 Բանկի կողմից ցանկությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվում մինչև 31.12.2019թ., եթե Բանկի և Ակցիայի մասնակցի միջև այլ պայմանավորվածություն չկա: Եթե Բանկի կողմից նվերի տրամադրման համար սահմանված օրը Ակցիայի համապատասխան մասնակիցը չի ներկայանում Բանկ, ապա նա կարող է ստանալ նվերը նշված օրվանից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում, որից հետո մասնակիցը կորցնում է նվերի ստացման իրավունքը:

5.4 Նվերները տրամադրվելու են անձամբ Ակցիայի համապատասխան մասնակիցներին՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, կամ նրանց լիազորված անձանց՝ օրենքով սահմանված կարգով լիազորագիր և անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում: